

ունգությունը, որը բազմակողմանիորեն արտացոլված է արևմտահայ մամուլում, հայ քաղաքային ազգագրությունն ուսումնասիրելու շատ կարևոր հարավորություններ է ընծեռում: Այդ մամուլի էջերում տեղ են գտնվող պոլսահայ զաղթօջախի հասարակական-տնտեսական կենցաղի, հոգևոր մշակույթի և սոցիալական առըճեր խմբերի ու շերտերի նյարդագրությունները: Ըստ իս, այդ նյութերը կարելի է դասավորել հետեւյալ կերպ:

1. Հասարակական-տնտեսական կենցաղ: Ուշագրավ են զբաղմունքներին /երկրագործություն, ձկնորսություն, արդյունագործություն, առևտուր, մատականոց և այլն/, նյութական մշակույթին /ընական, դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց, որանոց, եկեղեցի, գերեզմանոց, կահկանակի, փոխադրամիջոց, զգիստ, զարդարանք և այլն/, ընտանիքին /կազմը, մնաց և հիերարխիան, հարսանիք, ծնունդ, կնունք, հուղարկավորություն, ազգակցական համակարգ և դրանց հետ աղերսված ծիսական սովորույթներ/ վերաբերող նյութերը:

2. Պոլսահայերի սոցիալական խմբերն ու շերտերը: Որոշակիորեն ննրկայացված են՝ աշխատանվորները / երկրագործներ, ձկնորսներ, նավաստիներ, մշակներ, քեռնակիրներ, արհեստավորներ և ուրիշներ/, կղերա-ամիրայական դասը /առևտրականներ, վաշշառուներ, մեծահարուստ պաշտոնյաներ, հոգևորականներ և ուրիշներ/, մտավորականությունը /ուսուցիչներ, ժմիշկներ, գրողներ, լրագրողներ, դերասաններ ու երաժիշտներ, փաստաբաններ և ուրիշներ/:

3. Հոգևոր մշակույթը ևս բազմակողմանիորեն է արտացոլված /բանահյուսություն՝ ժողովրդական երգ' ը, պարեր, հեթիաթներ և այլն, ինչպես նաև խաղեր, տոններ, կրոն և հավատալիքներ, ժամանց, լեզու՝ պոլսահայ ըսրբառ, և առնասարակ ժողովրդական պատկերացումներ ընության և հասարակության մասին/:

ԱՐՏԱՇԵԽ ՆԱԶԻՆՅԱՆ

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ժողովրդագիտական ուսումնասիրություններում շատ կարևոր է հասցուական մեթոդների համալիր /կոմպլեքս/ կիրառումը, գուգակցելով ազգագրության, բանահյուսության, հնագիտության և հարակից այլ ծյուղերի նյութերի համեմատական ըննությունը:

Ներկա գեկուցման մեջ աղծարծվում են բանայուսություն զատմա-
ազգագրական ուսումնասիրության մի քանի հարցեր, որոնց համախ
տուլվում են որոշ ժանրերի ծագման, տարածման ու կենցաղավարման ա-
ռանձնահատկությունների որոշմանն ու լուսաբանմանը:

Ա. Ժողովրդական վեպի /էպոս/, ավանդությունների, վիճական եր-
գերի և ընդհանրացես վիճական բանահանրության հետազոտության ա-
ռանցքային խնդիրներից մեկը պատմական իրողությունների, դեղքերի
ու դեմքերի անդրադարձման կամ ընդհանուր առմամբ բանահանրության
ատմականության պրոբլեմն է, որի շուրջ սկզբունքային վեմեր են ե-
ղել և առկավին շարունակվում են:

Բ. Ծիսական բանահանրության տեսակների /հարսանեկան երգ, աշ-
խատանքային երգ, ողը, աղոթք և այլն/ հետազոտությունն արդյունա-
վետ կարող է լինել այդ տեսակների հետ անմիջականորեն շաղկագված
ազգագրական իրողությունների, երևույթների համատեղ ընությամբ,
ինչպես նաև բանահանրության այդ տեսակների կատարման եղանակի /մե-
ղեղի, նվազ, պար, շարժում/ հաշվառմամբ, որով կամքողջան այդ
տեսակների ժանրային ընությանը՝ բովանդակության, մեկ և կիրարկ-
ման /ֆունկցիայի/ առանձնահատկություններով:

Գ. Հերիաթների, մասնավորապես հրաշապատում հերիաթների սյու-
ժենների ծագման, մեկավորման ու տարածման հարցում, անշուշտ, մեծ
դեր են խաղացել ազգագրական համեմնի ծեսերն առնասարակ, նվիրա-
գործական /ինիցիացիոն/ ծեսերը՝ մասնավորապես: Բայց համախ գիտա-
կան հետազոտություններում միակողմանիորեն տարվելով դրանց համե-
նի կողմերով, անտեսվում է հերիաթի՝ որպես բանավոր գեղարվեստական
ստեղծագործության սոցիալական դերն ու կիրարկումը:

Դ. Բանահանրության այնպիսի տեսակ, ինչպիսին առանցելն է,
անխզելիորեն և խոր արմատներով կազմված է ազգագրության մի մեծ
ընազագանի՝ ժողովրդական հավատքի և հավատալիքի հետ: Առասպելնե-
րը, ի տարբերություն բանահանրության մյուս տեսակների, ամբող-
ջական տեսքով չեն հասել մեզ: Այդ պատմառով գիտական հետազոտու-
թյուններում օգտագործվում են հնագույյն գրական վկայությունները,
բանահանրության ըեկորները, լեզվաբանության ավյալ ները՝ ստեղծելով
առասպելների վերակառուցված ու վերականգնված /ուկոնստրուկցիոն/
պատկերը: Ընդունելով այդ վերականգնումներն ու վերակառուցումնե-
րը, պետք է նկատել, որ երբեմն անտեսվում կամ թերագլանայում են
դիցարանության կամ առասպելաբանության ազգային արմատներն ու ինք-
նուրույնությունը: